

## ԿԱՆՄԻՔ

Ֆրիդա Հմայակի Հակոբյանի՝ «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում» վերնագրով, ԺԳ.00.01 թվանիշով, «մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության մասին

Ցանկացած մարդու, մասնագետի, արվեստի, գրականության ու գիտության ներկայացուցչի, պետական, քաղաքական և հասարակական գործչի, երկրի յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքային և ստեղծագործական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նրա ստացած կրթությամբ, որը պետք է դիտարկել նախ մանկավարժի դեկավարությամբ իրականացվող գործընթաց, ապա և ողջ կյանքի ընթացքում անհրաժեշտ շարունակական գործունեություն:

Ժողովրդի կենսագործունեությունը, երկրում գիտության ու տեխնիկայի, արվեստի ու գրականության զարգացումն ապահովող կրթության ոլորտն այսօր ողջ աշխարհում ուղեկցվում է երբեմն արդյունավետ, երբեմն էլ հասարակության կողմից մերժելի ու անհաջող բարեփոխումներով:

Դրա համար էլ մանկավարժ գիտնական հետազոտողների ուսումնասիրությունների հիմքում դրվում է այդ բնագավառի համար առանձնակի կարևորություն ներկայացնող՝

- մանկավարժների մասնագիտական **պատրաստման և վերապատրաստման,**
- մանկավարժական **մոտիվացիայի** մանկավարժական գործունեության արդյունավետությունն ապահովող **դրդապատճառների,**
- մանկավարժական **կոմպետենտության բարձրացման,**
- կրթության ոլորտում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման **ուղղությունների** մասին հարցերը:

Հենց այս խնդրի լուծումն էլ **կազմում է** պաշտպանության ներկայացված թեկնածուական ատենախոսության **նպատակը:**

Հետազոտությանն արդյունավետ լուծումներ տալու, իր առջև դրված նպատակն ու առաջ քաշված խնդիրները ավարտին հասցնելու համար ատենախոսը որպես իր **հետազոտության ռազմավարություն,** քննարկմանը է ներկայացնում:

- **Շարունակական կրթության** համատեքստում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման:
- **Մանկավարժական կրթությունը** որպես մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման հիմնավորման:
- Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման գործընթացների **ատանձնահատկությունների բացահայտման** հարցերը:

Եվ նա, որպես իր **հետազոտության մարտավարություն** քննարկման է ներկայացնում

- Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման **հայեցակարգային դրույթները**, գործընթացները, **մոտեցումներն ու եղանակները:**
- Մանկավարժական կրթության գործառույթային շրջանակները, կոմպետենտային մոտեցումները, **կազմակերպման մոդելները**, զարգացման **միտումներն ու սկզբունքները:**
- Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման **տեղեկատվայնացման**, **իրավանորմատիվային** հիմքերը և հիմնախնդիրները կրթության համակարգում հարցերը՝ **ամենաժամանակակից պահանջներով**, **մանկավարժական գիտության վերջին խոսքով**, **հետազոտական բարձր մակարդակով** կատարված **վերլուծություններով** ու **հիմնավոր ապացուցումներով:**

Ատենախոսը իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող **գլուխներում** ներկայացնում է հետազոտության ընթացքում իր կողմից արձանագրված նոր ու կարևոր այնպիսի փաստեր, որոնք **նպաստել են** իր **առջև դրված նպատակային խնդիրների** արդյունավետ լուծմանը, **հետազոտության տեսական նշանակության հիմնավորմանը** և, որ **ամենակարևորն է**, **գիտական նորույթի հաստատմանը:**

Ատենախոսի գիտական հետազոտության ընթացքում ձեռք բերած փաստերից **ատանձնակի հետաքրքրություն** են ներկայացնում

- «**մանկավարժական մասնագիտական ներուժ**» եզրույթը **ատենախոսի** գիտական մանկավարժական մեկնաբանությամբ,

- այդ եզրույթի առանձնակի ու կարևոր հասկանիչները՝ ռեսուրսների ապահովվածությամբ, նրա գործադրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ, ներուժի փոփոխականությամբ, բաղադրիչների միասնության ապահովմամբ, և կառուցվածքի բացահայտմամբ,
- մասնագիտական կոմպլեքսությունը՝ նրա խմբերի բաժանմամբ և ուսումնական դաստիարակչական, մեթոդական, կազմակերպչական, տեխնոլոգիական, պլանավորման, նախագծային, գնահատման կառավարչական բաղադրիչներով,
- մանկավարժական մասնագիտական ներուժը կրողի՝ ուսուցիչ մանկավարժի անձնային ու մասնագիտական որակները՝ իրենց մանկավարժական վարպետությամբ, մասնագիտական գիտելիքներով, մասնագիտական կարողություններով, ունակություններով ու հմտություններով, մասնագիտական փորձով, անձնական նվիրումով, հուզականությամբ, մտքի ճկունությամբ, հոգեկան խանդավառությամբ, երեխայի և իր մասնագիտության նկատմամբ սիրով ու նվիրվածությամբ:

Մրանք կազմում են ատենախոսության առաջին գլխի բովանդակությունը գիտական պատշաճ շարադրանքով:

Ատենախոսն իր բանականությամբ, մասնագիտական փորձով, աշխատասիրությամբ, հետազոտողին վայել բժախնդրությամբ ոչ միայն վերլուծում է իր հիմնախնդրի հետ առնչվող գիտական աղբյուրները, գիտության լեզվով պատասխանում մասնագետ գիտնականներին, այլ համարձակ ներկայացնում է նաև իրը՝ սեփականը, որպես նոր ու թարմ խոսք ժամանակակից մանկավարժական գիտության տվյալ բնագավառի մեջ:

Պակաս ինքնատիպ չէ նաև ատենախոսության երկրորդ գլուխը: Այն հետազոտությանը նպաստող գիտական նոր փաստեր է ի ցույց դնում, որոնք հիմնավորում են մանկավարժական մասնագիտական ներուժի՝ ատենախոսի կողմից առաջ քաշված դրա ձևավորման ու զարգացման ուղղությունները, որպես հետազոտության մեջ հիմնավորված գիտական նորույթ: Դրանք են՝

- Մանկավարժական կրթության շրջանակի մեջ ներառված և մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման ուղղությունների

հայտնաբերման մասը կազմող **գործընթացի կազմակերպման մոդելները**:

**Ատենախոսն** այնքան վարպետորեն է ներկայացնում իր հետազոտությանը նպաստած **մոդելները**, որ դրանք ուսումնասիրողների համար ներկայացնում են որպես

- **համակարգ**, որը փոխարինում է մանկավարժական մասնագիտական ներուժին այնպես, որ նրա աշխատանքը մեզ տալիս է նոր լրատվություն նրա ձևավորման ու զարգացման ուղղությունների մասին,
- **կառուցվածք**, որը մանկավարժական սուբյեկտների, այդ թվում մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման ուղղությունների գործունեությունը դարձնում է պարզ, մատչելի, հասկանալի և օգնում է այն յուրացնել արդյունավետ մեթոդներով, միջոցներով ու ձևերով,
- **հաղորդակցման լեզու**, որն օգնում է հետազոտողին մտածել, վերլուծել, բացահայտել մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման բազմազանությունը:

- **Մանկավարժական մասնագիտական ներուժի զարգացման միտումները**, որոնք ատենախոսը ներկայացնում է կրթության շարունակականացման, հումանացման, ժողովրդավարացման, ինտեգրացման, ինտենսիվացման, տեղեկատվայնացման, ձևով ու բովանդակությամբ:
- **Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման գործընթացի արդիականացման սկզբունքները**, որոնք կոմպետենտային մոտեցմամբ, մշակութափոխարկությամբ, ուսանողակենտրոնությամբ, կոլեգիալ որոշումներ ընդունելու, բազմազանությամբ, փոփոխություններին արձագանքելու ձևերով ատենախոսը դնում է իր հետազոտության հիմքում և ապահովում է նրա իրականացման ձևի ու բովանդակության ներդաշնակությունը:

**Ատենախոսության երրորդ գլուխը** գիտական պատշաճ մակարդակով կատարված հետազոտությունների օրինակ է: Ատենախոսի կողմից ներկայացված

- ուսուցչի **տեղեկատվական և հաղորդակցական կոմպետենցիաների** ձևավորման ու զարգացման գործընթացների,
- մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման

իրավանորմատիվային հիմքերի,

- ուսուցիչների թվաքանակի փոփոխության ու կրթական մակարդակի վերապատրաստված, ատեստավորված և տարակարգ ունեցողների,
- մանկավարժական մասնագիտական կրթության և նրա ներուժի զարգացման հիմնախնդիրների գծով ատենախոսը կատարել է այնպիսի գիտական ու հետազոտական ուղղվածություն ունեցող հետազոտություններ, որոնք օգնում են ատենախոսին հետազոտության նպատակը համարելու կատարված, իր առջև դրված խնդիրները՝ լուծված, գիտական նորույթը՝ հաստատված: Հետազոտության հեղինակը հիմք է տալիս իրեն համարելու ոչ միայն մանկավարժ, այլև սոցիոլոգ հետազոտող:

Հանգում ենք այն կարծիքին, որ ատենախոսը լիովին գիտակցել է իր ընտրած հիմնախնդրի կարևորությանը ժամանակակից մանկավարժական գիտության մեջ և իր հետազոտության գիտական դեկավար, բազմավաստակ գիտնական, ՀՀ վաստակավոր մանկավարժ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թովուզյանի պահանջկոտության շնորհիվ իմաստավորել է այն իր բարձրակարգ հետազոտության միջոցով և սպասում է այն գիտական գնահատականին, ինչը մենք, որպես ատենախոսության առաջին պաշտոնական ընդդիմախոս, անում ենք:

Բայց գիտական այսքան բարձր մակարդակով կատարված հիմնախնդրի հետազոտողը պետք է, որ ոչ մի վրիպում թույլ չտար:

Բայց դա էլ է բնական և գիտական լուրջ հետազոտության մեջ նույնիսկ ընդունելի, որը ատենախոսի կողմից թույլ է տրվել:

- Ատենախոսության «ներածությունում» չի ընդգրկել «հետազոտության մշակվածության աստիճանը» և աշխատանքի «կատարման փուլերը», որոնցով կամբողջացներ ատենախոսության ապարատը:
- Խախտել է գիտական ապարատի տարրերը կազմող գիտական վարկածի, «հետազոտության խնդիրների», «պաշտպանության ներկայացվող դրույթների» և «եզրակացությունների» համամասնությունը: Եթե դրանք բովանդակությանը լրացնում են իրար ու կազմում մեկը մյուսի օրգանական շարունակ:

կույություն, ապա **ձևով՝ կետերի հակասում են ներդաշնակությունը**, ունենալով համապատասխանաբար 3-ը, 7-ը, 4-ը, 10-ը:

- Ատենախոսության «**եզրակացությունների**» մի քանի կետով կարելի էր տալ հետազոտության խնդիրների օբյեկտիվորեն լուծված պատասխանները: Իսկ ատենախոսը կետերը հասցրել է 10-ի, **ծանրաբեռնելով նաև բովանդակությունը**:

Բայց պարզից էլ պարզ է, որ ատենախոսի կողմից թույլ տրված վրիպումները չեն ազդել և չէին էլ կարող ազդել գիտական այդպիսի մակարդակ ունեցող հետազոտության վրա:

Այնպես որ բոլոր հիմքերն ունենք արձանագրելու, որ «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում» վերնագրով, ԺԳ.00.01 թվանիշով, «մանկավարժական տեսություն և պատմություն» մասնագիտությամբ ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, նոր ու թարմ խոսքով շարադրված, գիտական պատշաճ մակարդակի հասցրած հետազոտություն է, որը լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Իսկ ատենախոս Ֆրիդա Հմայակի Հակոբյանը արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Առաջին պաշտոնական ընդդիմախոս,

ՀՀ վաստակավոր մանկավարժ, մանկավարժական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Պրոֆեսոր Մնացական Մանուկյանի ստորագրությունը  
հաստատում եմ, որովհետև

Մնացական Մանուկյան

Մարիամ Բսպիրյան

12.04.2021թ.

ք. Երևան